ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2021թ. թիվ 109-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ԱՌԿԱ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, ՀՀ Լոռու մարզի համայնքներում բնակչությանն առկա պաշտպանական կառույցների կցագրման և ազդարարման սարքավորումների տեղադրման աշխատանքները կանոնակարգելու նպատակով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում բնակչությանն առկա պաշտպանական կառույցների կցագրման և ազդարարման սարքավորումների տեղադրման աշխատանքների կանոնակարգման հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մարզի համայնքների ղեկավարներին՝ 10-օրյա ժամկետում ներկայացնել համայնքում բնակչությանն առկա պաշտպանական կառույցների կցագրման և ազդարարման սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշման հավելված 2-ով սահմանած տեղեկատվությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում հրավիրել հանձնաժողովի նիստ:

4. Հանձնաժողովի անդամներին՝ ուսումնասիրել ստացված տեղեկատվությունը, քննարկել հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություն՝ ՀՀ Լոռու մարզպետի համապատասխան շրջաբերականներ նախապատրաստելու, ինչպես նաև սահմանելու հսկողություն՝ շրջաբերականների կատարման նկատմամբ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել հանձնաժողովի նախագահի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/25/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 25
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. փետրվարի 25-ի
թիվ 109-Ա որոշման

Կ Ա Զ Մ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ԱՌԿԱ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՅԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՋԴԱՐԱՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ.Ասրյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ.

Ա.Գրիգորյան - Լոռու մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ

Ա.Սահակյան - մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ

Վ. Ղարսայան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ

Լ.Հախինյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ

Վ.Հովհաննիսյան - մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ

Լ.Վարդանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Գ.Տոնոյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Ա.Գասպարյան - մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պարտականությունների կատարող

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2/25/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. փետրվարի 25-ի
թիվ 109-Ա որոշման

«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ԱՌԿԱ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Տեղեկատվություն բնակչությանն առկա պաշտպանական կառույցների կցագրման վերաբերյալ՝ ըստ բնակավայրերի

Բնակավայրը	Բնակչության թվաքանակը	Պատսպարման վայրերի մակերեսը	Պատսպարվող բնակչության թվաքանակը	Չպատսպարվող բնակչության քանակը	Առաջարկություն չպատսպարվող բնակչության կցագրման վերաբերյալ	Բնակչության տեղեկացվածությունը իրենց պատսպարման վայրերի վերաբերյալ	Պատսպարման վայրի վիճակը		
							Մաքրված է (այո, ոչ)	Առկա է լուսավորություն (այո, ոչ)	Պատրաստ է պատսպարվողների համար (առկա է ջուր, սանհանգույց, նստատեղեր)

2. Տեղեկատվություն ազդարարման սարքավորումների վերաբերյալ՝ ըստ բնակավայրերի

Բնակավայրը	Ազդարարման սարքավորման (շչակ) առկայությունը (առկա է, առկա չէ)	Մոդելը	Շչակի վիճակը		Բավարարում է առկա շչակը (շչակները) համայնքի ամբողջ բնակչությանը ազդարարելու համար	Չբավարարող շչակների քանակը և մոդելը	Անհրաժեշտ շչակների ձեռքբերման հնարավորությունը	Առաջարկություն շչակների ձեռք բերման վերաբերյալ
			Սարքին	Անսարք (անսարքության պատճառը)				

Համայնքի ղեկավար _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն) »

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2/25/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ